

սարակ դպրոցաց մէջ քանոնն ու ճիւղորդ իւրեանց նախկին իրաւունքները անկորուստ կ'լայելեն. սոցա հետ միացուր այն վնասակար Ասիական գաղափարը Դպրոց գնացող մանչ տղայոց համար ծնողաց կողմանէ՝ թէ այլ եւս գրքերէ գձեռք մի վերցընել, որպէս զի ընկերներէ գ ետ չմնաս, խելօք նստիլ, մի խաղար, գիւղացի տղայոց կ'լայելէ խաղալ, կանչել եւլն, իսկ աղջկանց համար՝ թէ որ եւ է աւելորդ շարժումն ընդդէմ է՝ ինչպէս ռուսացինք՝ հայկական պարկեշտութեան. կարող ես, սիրելի ընթերցող, հասկանալ՝ թէ որչափ հարկաւոր է այժմէն իսկ, նախակրթական դպրոցներէն սկսեալ խստիւ որոշել եւ օտահմանել դաստոտութեան ժամուց եւ խաղուց բարեխնամ՝ կանոնաւորութիւնը ու չափաւորութիւնը, որպէս զի մտաւոր աշխատանաց բեղմնաւորութիւնը կախումն ունենայ ըստ իմիք աշակերտին առողջ կազմուածքէն եւ այդ առողջութիւնը լայն ասպարէզ բանայ իրեն բարձրագոյն ուսումնարաններ մտնելու եւ Եւրոպական գիտութիւնները առողջ ըզեղիլ մէջ ընդունելու:

Եւ որովհետեւ Հայաստանի եւ ծածկատանի եւլն գիւղաբնակ տղայք, ինչպէս նաեւ չափահաս մարդիկ՝ ըստ հին Նահապետական սովորութեան՝ շատ անգամ 20 հոգի եւ աւելի եւս մէկ տան մէջ բնակելով՝ առողջապահական օրինաց վերայ բնաւ ուշադրութիւն չեն դարձընել, — գուցէ շատեր չգիտեն իսկ, — ուստի բնականապէս Դպրոցաց բացման եւ մտաւոր աշխատանքի հետ դուրս կելնէ անհրաժեշտ կա-

րեւորութիւնը դպրոցաց եւ նստարանաց շինութեան յարմարութեանը վերայ խորհել, վասն զի դոցա անյարմարութիւնը ըստ մթութեան սենեկաց եւ նեղուածքի անտարակոյս կարող է նորանոր առիթներ ընձեռել վատառողջութեան եւ այլ ախտաւորութեանց թարմ հասակի մէջ, որոց վերայ ուրիշ յօգուածներով կ'իսօսիմք՝ քաղելով լաւ աղբիւրներէ այն ամենայն կարեւոր տեղեկութիւնները եւ գիտելիքները, որք իւրաքանչիւր ազգաց սկզբնական դպրոցաց բարեյարմարութեան համար կը հրատարակուին այլ եւ այլ լրագրաց եւ առանձին աշխատութեանց մէջ:

Հ Ա Յ Կ Ո Ր Գ Ի .

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ ԴԱՐ.

Ներկայ դարս՝ որին կանուանենք «լուսաւորեալ դար»՝ բացառութեամբ մի քանի Աւրոպական ազգերի, Հայոց ազգի համար որքան օգտաւէտ եւ արդիւնաւոր եղած է, մի թեթեւ ակնարկ ուղղելով՝ տակաւին ծանր եւ ցաւալի պակասութիւնք կ'աեսնենք:

Լոյսը՝ մութ տեղը կլուսաւորէ, սա անհերքելի ճշմարտութիւն է. ուրիմն լուսոյ մէջ ամենայն ոք մտածելով իւր օգուտները՝ հարկաւոր է ընթանալ ուղիղ ճանապարհը. բայց եթէ մէկը բաց աչօք կուրօքն խարխալի, կնշանակէ զեռ նայն ատիժան չէ զարգացած՝ որ լուսոյ

յարդը ճանաչելով՝ նորա բարիքը կարողանայ փայլել։ Ուրեմն նորա համար լոյսը՝ խաւար է, ապա և օրը, տարին և դարը ևս խաւար պիտի համարուի։ Սուրբ հարկաւոր է թշնամույ դէմ և այն ևս ի վերջին աստիճան հարկը պահանջած դէպքի մէջ․ ապա եթէ առնես ձեռք և սկսես քո սիրելի հայրը և մայրը և ազգականները կոտորել, այդ ի՞նչ պարծանք․ նաւ կշինենք ծովու ահռելի և դաղանացեալ ալեաց հետ մաքառելով անվնաս հասանելոյ նաւահանգիստը, ապա եթէ նա պիտի մեզ անդնդասոյզ առնէ՝ աւելորդ չէ՞ մեր աշխատութիւնը։

Ուսումն կառնենք որ պէտք դանք մեր ազգին, նորա անցեալ վիճակը տեսնելով՝ զգուշանալ ներկայիս և մեծ հոգսով սկսել դատաւարակել մանուկները՝ և ուսման քաղցր ծաշակը տալով՝ ապահովել նոցա ապագայն, օգնենք մեր բնակեաց՝ ոչ թէ լոկ այլք բնիկն որոշել կարողանալով մեծամտելոյ, Փարիզ, Լոնդոն ղնալով իրան չաստուածացեալ համարել, իւր հաւասարակից եղբարքը մարդակերպ անասնոց տեղ դնել, ամօթ համարել նոցա հետ խօսել և խորհրդակցել, նոցա ընթացքը ծաղրել, դատմունքը պախարակել, միայն իւրեան յամառեալ կոպտութիւնքը ամենէն գերազանց հասկացողութիւն համարել, այլ սիրտ սրտի հետ միացնելով, հարկաւորելիքը հոգալով, նոցա հետ խորհրդակցելով, պակասութիւնները սիրով և քաղցրութեամբ յուզողութիւն անելով, որով լինինք պարծանք մեր ծնողաց, և արժանապէս համարուինք լուսաւորեալ դարու նոր սերունդներ․ ապա եթէ մէկը սորա հակա-

ռակին գործ դնէ իւր ուսումը՝ կնշանակէ նա լուսաւորեալ դարու մէջ ծնուած է խաւար դարու սերունդ։

Վերքը վերքով չի ողջանալ՝ այլ ըսպելդանիքով․ ամենայն ինչ իւր փոխադարձը կպահանջէ․ սէրը՝ սէր կպահանջէ, ամեն բան սիրոյ միութեամբ առաջ կերթայ, ապա եթէ սիրոյ քաղցրութեանը դառնութիւն խառնուի, անհնարին բան է՝ ընթացողը որքան ջանք գործ դնէ՝ դարձեալ իւր առաջուայ ընթացքի ուղղութիւնը չի ունենալ։ Ներկայ դարուս ուսեալ նոր սերունդ համարուած անձերէն ոմանք՝ իրանց նշանակութիւն և նոր մարդ ցոյց տալոյ համար՝ փոխանակ անժամակորոյս միջոցաւ իւրեանց ուսումը հասարակաց օգտին գործ դնելոյ, մեծի և փոքրի վերայ յարձակուելով՝ զրեթէ դարձած են ժանտախտ հասարակաց․ վասն զի զգուշել երգիծաբանութիւններով ազգութեան յօնքը ուղղել կամենալով՝ աչքը կհանեն, և ազգի զուխը կտրելէն յետոյ՝ կդառնան նորա մազերը սանդղել և անուշահոտ իւղով օծել․ ահա ի լուսաւորեալ դարուս նոր սերունդ համարուածի գործ, ահա լուսաւորեալ երիտասարդի ոգւոյ արդիւնք, որ ամեն մէկ ծափ տալոյն՝ կաբաւել կսկըսին, տերեւի շարժմանը թնդանօթ արձակել, օրինակի համար։

Մեր խղձալի ազգը՝ ներկայ դարուս պահանջմանց համաձայն ունեցաւ Աթուղիկոս․ մեր Պէտրոս Պ․ ազգասէր Աթուղիկոսը՝ Հայրապետական Աթոռը բազմաձին պէս՝ ընդհանուր Հայաբնակ քաղաքներէ և գիւղերի մէջ կանգնացրեց ուսումնաբաններ, յորոց ուսման կենսատու քաղցր հոտը բուրելով՝ ազգիս նոր կենդանութեան

մի հրաշալի դարկ տոռաւ. բայց ո՞ւմ կասես, ո՞ւմ ցոյց կուտայ, ո՞ւմ կամիս բան հասկացնել, երբ Յովհաննէսի չուտելոյն և չխմելոյն համար ասացին «Վե զոյ ի քեզ», և Յիսուսի ուտելոյն և խմելոյն համար «կերող և արբեցող է»։ այլ աւելորդ չէ քո գլուխ ցաւացնելը. չէ՞. ես կամիմ անմեղները չգայթակղուելոյն համար գրել՝ որչափ գրիչս կզօրէ, ցոյց տալ ճշմարտութիւնը իմ համարիւն միամիտ եղբարցը, որ զգուշանալով զիմակաւորեալ բանագէտներէն, սիրեն իշխանաւորը և նորա բոլոր ընթացքները յարգեն, որովհետեւ «նա՛ որ հասարակաց պաշտօններէ մէջ մտած չէ, չի իմանալ թէ՛ որչափ զժուարին է ժողովուրդ կառավարելը, նա՛ որ որդիք ունեցած չէ, չի ճանաչել թէ՛ ի՞նչ են մէկ հօր խնամքն ու հոգսերը»։ նոքա՛ որոնք իշխանութեան պաշտօն վարած չեն և կամ նոցա հետ մերձաւորապէս կեանք ունեցած չեն, ի՞նչպէս կարող են վէճեր բանալ և մեծ մեծ դատաստաններ անել. շատ չե՞ն իշխանաւորի հոգսերը ու վշտերը, որ նորանք էլ մէկ կողմէն կպարսաքարեն. ահաւասիկ ժողովուրդը մի ալէծուփ ծովու կնմանի՝ և այս ծովը պիտի լուղաղէ իշխանաւորը. միշտ նորա բռնած ձուռնապարհը կպախարակեն, միշտ նորա տրած ընտրութիւնները կըսրովեն. մէկի հետ ծածուկ խօսի՝ կասկածանայ կերթան, ձեռք զարկած բաները յաջող գնացին, բաղդին արդիւնք կհամարին նորանց. դրժբաղդութեանց հանդիպեցաւ, նորան միայն յանցաւոր կամբաստանեն. թէ որ անաչառ է, անողորմ կասեն, թէ որ զթաճ է, օրէնքը պատուել տալ չգիտեր. կերջանկացնէ՞ ժողովուրդը, պաշտօնականք կըրժ-

գոհան վերան, մեծերին բարիք կանէ, ժողովուրդը կտրանջայ. վայ որ առնէ, բարին՝ վայ որ չառնէ, երկուսէն որ մէկը որ առնէ՛ դարձեալ արտունջներ պէտք է լսէ. զորօրինակ՝ մի ստոր աստիճանի մէջ գտնուած անարժան անձի համար ապաստան հանդիտանալով՝ մի բարձրատիճան անձն՝ կերթայ առաջարկութիւն կանէ իշխանաւորին «Թէ իմ պատուոյ համար սորան շնորհիւ այս ինչ արտօնութիւն», ինչ անէ իշխանաւորը՝ թէ ասէ քո պատուոյ համար ժողովրդեան սիրտը սրէ անցնեմ, քո պատուոյ համար իմ անձը անէճքի և բամբասանքի տամ՝ չի լինի. և թէ չասէ՛ ևս չի լինի, ուրեմն այստեղ հարկաւոր է երկուց չարեաց փոքրագոյնն ընտրել. որ փոքրագոյնն ընտրէ, երկուքն ևս մեծագոյն չարեաց չարիք են. ուրեմն լաւ է ասել ով որ ասել է, «լաւ դատաւորները միշտ թշուառ են, որովհետեւ իրանց ուզած բարիքը չեն կարող անել, և շատ անգամ մարդկեղաց խաբելութեամբը չուզած չարիքը կզործեն, վասն որոյ այսպէս հասկանալու է և բոլոր մասերը, և այսպիսի հակասութեանց ենթարկուող իշխանաւորի և նորա բոլոր գործքերի վերայ մանրամասն հետաքրքրութիւն չարած, ի՞նչպէս կարելի է լուսաւորեալ երկիրներ շրջող բանագէտ անձի համար՝ առնել գրիչը, հաստ ու բարակը, սեն ու սպիտակը չը որոշած երիտասարդական կըքին նուաճէ կամքը, և ինչ դուրս գայ գրչի ծայրէն՝ մրոտէ թուղթը, ո՞չ ասպաքէն «լեզուի հարուածը՝ դաշոյնի հարուածէն աւելի վտանգաւոր է», ի՞նչ պիտի լինի ուրեմն գրչի հարուածը, թող մտածէ այն բանագէտ անձը իւր գրչի մահաժառնգ արդենանց

վերայ, թէև ժամանակի փորձը յապայն
ցոյց կտայ նորան իւր երիտասարդական
կրից աշօք. նկատած և քննած դորձքերի
փնտնանքի վերայ զղջալը, սակայն անա-
զան և անօգուտ. ահաւասիկ այնպիսիներ-
ի ուսման արդիւնք. հապա ինչի՞ ի զուր
տեղը կձայնենք ուսումն, ուսումն: Ախ,
ե՛րբ պիտի գայ այն երանաւէտ օրը, այն
ոսկեղէն ժամը, որոյ մէջ ուսման լիալոյս
ճառագայթը շողալով մեզ վերայ, որով
զարնանային դեռաբոյս ծաղիկներն՝ նման՝
ցօղածարմ պարարուելով, սկսենք կեն-
դանատուր սիրոյ հոտ բուրել ի սնդուհս
միմեանց և նովաւ սէրը սկսի խաղալ սրտէ
ի սիրտ, ծաւալել Հայ աշխարհը, այնու-
հետեւ սիրոյ յորդանք տան մեր լեռները
ու հովիտները, սէր բղետն մեր ազգբուր-
ները, սէր աւետան մեր սոխակները, «ձա-
րակի գայլը գառին հետ», ինձը ուլի մօտ
մակաղի. որթը, ցուլը, եղն և արջը խմա-
սին ձարակին, և նոցա ձաղերը խառն շըր-
ջին: Առիւծը իբրեւ եղն յարդ ուտէ. մա-
տաղ մանուկը իժերի ծակը և իժերի կո-
րիւնների բոյնը տանի ձեռք՝ չմեղանչէն,
չկարողանան հարկանել մէկին . . . որով-
հետեւ երկիրը լցաւ Տիրոջ զիտութիւնովը».
Եւ հայ խաղաղական կեանքը, այս զրախ-
տական վիճակը, այս ցանկալի երանու-
թիւնը մի պիտի չնորհէ մեզ, և թէ ոչ
ուսումը. իմաստուն մեղուները կհեռա-
նան փեթակէն ամեն տեսակ ծաղիկների
վերայ կիջնեն, սակայն նորանցից ամեն մէ-
կը միայն բարի հիւթը վերցնելով կվերա-
դառնայ իւր բջիջը յօրինելոյ և քաղցր
մեղրով լցնելոյ. ուրեմն այսպէս պէտք է
և մեր հայազգի մանուկներին՝ հեռանալ
Հայաստանէն օտարովայր քաղաքներ և

նոցա անուշահոտ ծաղիկների թունաւոր
մասերը թողնելով՝ ախորժու քաղցր հիւ-
թը վերցնելով զալ հայրենեաց բջիջը յօ-
րինել, լցնել քաղցր կենսատու հիւթով,
ապա այն ժամանակ կարելի է աւետել և
Հայաստանի համար նոր և լուսաւորեալ
դար. բայց ափսոս, որ Հայ մանուկների
շատերը սիրելի Հայաստանէն հեռանալով՝
կհեռացնեն իւրեանց սէրը հայրենիքէն,
վասն զի նազելի Հայաստանի բոլոր փառ-
քերը ի հող թաղուած լինելով, սեւազ-
գեցիկ տխուր փլատակների մէջ հայու-
թեան անարատ ոգւով բնակիչների ան-
պաճոյճ կեանքը տեսնելէն յետոյ, յան-
կարձ կներկայանայ նոցա աչաց առաջ Աւ-
րոսական շքեղաշուք պալատանման հո-
յակապ շինութեանց գեղեցկութիւնը և
քաղաքական կարգաւորեալ ուղղութիւն-
քը, որոնցից փոխանակ օգուտ քաղելով
իւրեանց չքնաղ մայր Հայաստանի մա-
հագուշակ վեբերը բուժելու կենդանա-
ցուցիչ սպեղանիք գտանելով փութալ ի
հայրենիս, ընդհակառակն ամենը մոգա-
ցութեան տալով իբրեւ մի հրէշ թունալի
վատատիով կվերադառնան. ուրեմն նո-
րանցից ինչ բարիք որ յուսալոյ է յու-
սանք, ապա և մեր Մայր Հայաստանը
թող սեւազգեստ նստած, ձեռքը ծնօտին
դրած, աչքերը արտասուք լցած, սպասէ
իւր որդւոցը՝ որպէս զի նախանձ և առե-
լութիւն մէկ կողմ՝ զնեն, ուսման յառաջա-
դիմութեան սիրոյ և միութեան դաշն կա-
պեն, և իւր պաշտելի զլեոյն՝ ուրախական
պսակ յօրինեն, և ձախառն զրոշմեն նոր
և լուսաւորեալ դար Հայաստանի:

Պ. ԳՐԻԳՈՐ Տ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՅ ՄԱՆԴԱԿԱՆԵՆ.

Ի ՏԷԷԷ-